600.0146.02.05.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2 մայիսի 2012 թվականի №146Ա
ք.Երևան

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կատարված վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 2-ի «Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կատարված վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության ձևը հաստատելու մասին» №510Ա որոշումը:
3. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 1-ից, իսկ 2-րդ կետը՝ 2011 թվականի նոյեմբերի 2-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Շ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ք. Երևան
2 մայիսի 2012թ.